

ԲԱԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար

Տարեկան 12 Ժր.

Վեցամսեայ 6 »

Արտասահմանի հա-

մար Տարեկան 15 »

Վեցամսեայ 8 »

Աւերիկայի համար

Տարեկան 8 »

Վեցամսեայ 4 »

ԿԱՆՈՒՄՈՒՄ ՎՃԱՐՆԵԼԻ

Մանուգրան սոցր. առնչի

հր. սին համար 40 սակրի


զ իսկ վերջին երեսի հա-

մար 20 սակրի է. երեկե

սակի սակրաներու համար

20 ժող զեղը կը զայն

Վառնայի համար ձեռքի 10 սակրի



Հայկական և քրտնական հարկերի  
 խմբագրության հասցի  
 Редакция на ввстникъ  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjourn»  
 Varna (Bulgarie)  
 Իրաւիւնքի և յանձնարարի  
 Արտասահմանի ձեռքի  
 (20 ՍԱՆԹԻՄ)  
 Պուշկարիոյ համար ձեռքի  
 < 15 ՍԱՆԹԻՄ >

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՄ ՕՐԵՐԸ

Ս. ԳԱՐԻԷԼԵԱՆ

Իշխաւոր գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՆԵՆԵՐԱԾ-  
 ԱՌԻՈՐԵԱԼ ՍՕՑԻԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ  
 ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ:

Տոմսակ գնել փափագողները կրնան  
 իրեն գիտել  
 Չար-Պորիս փողոց Վառնա

ՔԱՐԱՓՆԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ

Շարժութիւնն աւելի է որ ֆրանսիական կառավարութիւնը զբաղած է Պոլսոյ Բարափներուն հարցով. Սուլթանը զվճարած կերեւալայտար ընկերութեան մը յանձնած ըլլալուն համար Բարափները, որոնք Սուլթաններու մայրաքաղաքին երթեկեկութեանց գուռը կը համարուին, և ուր Համիտ այսօր անկարող է իր գաղանային կամայականութիւնները գործադրել տալ ճամբորդներու վրայ. Սրտադողը միշտ կը տիրէ իր մէջ. այդ անիծեալ Բարափները թերևս անուղղակի պատճառը պիտի ըլլան օր մը իրեն սպառնացող սպէտին. Հոն հաղարնեով մտնող ելլող Եւրոպացի կամ Եւրոպականաձև անցնող դարձողներուն մէջ, իրեն համար կասկածելի ու վնասակար քանի՜ անհատներ չմարած է ինք բայց չէ կրցած ձայն հանել, որովհետեւ ատենք օտար ընկերութեան մը գործակատարներն են, որոնց վրայ չի բանի իր բարբարոսութիւնը. Որքան անհատներ անշուշտ Բարափներէն ներս սպրդած են իր հակողութենէն խուսափելով, և ինչե՞ր դեռ կրնան մուտ գտնել այդ օտարութի գոններէն:

Երկու երկր տարիէ ի վեր միշտ այս մտահոգութիւնները կը տանջէին Սուլթանը. Պոլսոյ ֆրանսական դեսպանը ի զուր անընդհատ սալատեցաւ զայն ապահովելու թէ՛ ու է կասկածելի գէպք Բարափներէն ներս չի կրնար տեղի ունենալ, զիջողութիւններ ըրու, ապա-

յոյցներ տուաւ, նոյնիսկ իր փոտաին վատահոտած գաղտնիքները մտնեց, անշուշտ հաճելի ապահովութիւն մը տուած ըլլալու համար Սուլթանին, բայց ատենց մէջ ոչ մէկը կրցաւ Սուլթանին դիտարութիւնը փոխել: Անիկայ յամառեցաւ իր կառկածներուն մէջ, յամառութիւն մը, որ վերջ ի վերջոյ երկու կառավարութեանց մէջ միջադէպի մը տեղի տուաւ:

Բայց Սուլթանին այս յամառութեան սիրտ առողջը նոյնինքն Պոլսոյ ֆրանսական դեսպանը եղաւ:

«Պորոյ հասնելուն պէս, կը գրէ «Իրօ Արմէնիա» անիկա ուրիշ բան չի խորհեցաւ, բայց եթէ Սուլթանին գնել տալ ֆրանսական ընկերութեան մը շնորհուած Բարափները: Անիկայ իբրև լաւ միջոց, իր ապրանքին յարցը բարձրացնելու համար, Համիտ ու շարժութիւնը երկու կէտի վրայ հրախրեց. նախ դիտել տուաւ որ Բարափները եթէ ոչ ֆրանսական սեփականութիւն, բայց ֆրանս. ստացուածք ըլլալով, դեսպանը խառնակութեան մը պահուն, պահակ զբաղատներու զինուորները ցամաք հանելու արգելք չի պիտի ըլլար. երկրորդ՝ Սուլթանին անձնակազմ ապահովութիւնը կը պահանջէր որ. անիկայ կարողանար կատարել ապահովութեամբ հսկել, իր սահմանութեան միջոցաւ, ճամբորդներու մամունտին կամ մեկնումին վրայ: Վերջապէս, եթէ Սուլթանը Բարափներու բացարձակ տէրն ըլլար, ոչ ոք պիտի կրնար իր կայսրութենէն ելլել կամ հոն մտնել, առանց վեհապետին հաճութեան. Եւ սակայն պէտք էր Բարափներու արժողութիւնը վճարել, և նոյնիսկ քիչ մըն ալ աւելի:

Այս սակարկութեան ատեն, Համիտ ալ աշխատեցաւ ապրանքին յարցը իջեցնել. սկսաւ մաքառիլ ընկերութեան զէմ, մաքսային գործողութիւնները սուկայի դժուարացուց, ապրանքները կը վնասուէին քննուելու պատրուակաւ և ընկերութիւնը

յանցաւոր կը նկատուէր: Երկու տարի համբերելէ ետքը Բոնաթան բարկացաւ և իմացուց որ, եթէ Բ. Գուռը գոհացում չի տայ, գործի պիտի սկսի. Բ. Գուռը տեղէն իսկ չեւերաց. դեսպանը սեւամիջի օրը Սուլթանին ունկնդրութիւն ինդրեց, Սուլթանը իր շնորհակալութիւնները զրկեց ֆրանս. կառավարութեան ներկայացուցիչին որ իր ներկայութեամբ պատուած էր անոր կրօնական պտոյտը բայց ներողութիւն խնդրեց զայն չի կրնալ ընդունելուն, որովհետեւ «ակռան կը ցաւէր»: Բոնաթան կատեցաւ, իր կառավարութենէն մեկնման արտօնութիւն խնդրեց: Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութիւնը իրար անցաւ, ու թերեւս խնդրը այս միջոցիս կարգադրուած ըլլայ:

Որքան որ կը նախատեսենք, ըլլալիք կարգադրութիւնը Սուլթանին նպաստաւոր է. գոնէ այդպէս ենթարկել կոտայ «Թաւնոյ մէկ հատուածը. «Անշուշտ ազգու միջոցներ ձեռք պիտի առնուին բայց, կըսէ Թան Սուլթանին սովորական արդար ոգւոյն վրայ կատարել վստահութիւն ունինք, և գիտենք թէ անիկայ կայսրութեան դերագոյն շահերուն գիտակցութիւնն ունի»:

Այս թագապօսկ աւաղակին համար արգարութեան խօսք ընել, պաշտօնապէս կամ անպաշտօն կերպով յարգանք տածել 300,000 հայերու անպատիւ խոչընդիւն, իսկապէս ճշմարտութիւնը նախատել և բառերուն բռնազբօսիկ կերպով հակառակ նշանակութիւն մը տալ է: Բայց չարչիներու լեզուով, զոր ֆրանս. արտաքին գործոց նախարարը փոխ առած կերեւի, ասիկա կը նշանակէ թէ՛ Համիտ պիտի վճարէ և ի փոխարէն, ֆրանս. կառավարութիւնը քանի մը թուրք փախստականներ պիտի արտաքսէ, գառի պիտի ենթարկէ քանի մը ֆրանսացի գրագէտներ որոնք անոր ոճիւրները հրատարակած են, քանի մը թերթեր կամ նամակներ որոնք Պոլսոյ զրկուած

էին անոր ձեռքը պիտի տայ: Եւ Սակայն կը շարունակէ, «Իրօ Արմէնիա», քիչ ատենէն պէտք պիտի ըլլայ Պոլսոյ մէջ ձայն բարձրացնել, և առուտուրէն տարբեր լեզուով մը խօսիլ: Բարբարախաբար, Ռուսիա, Սուլթանը խրատելէ ետքը բարենորոգումներ մացնելու համար այսօր տարբեր ուղղութեամբ մը կը միջամտէ: Սօֆիա ընդհանուր հիւպատոսք քննութենէ մը ետքը, կը հաստատէ թէ Մանաստի, Բօսովի, Սելանիկի և Էտիրնէի գիւղերուն մէջ քրիստոնեաներու կացութիւնը այն է, ինչ որ էր 1877ին. երբ պուլկարական գաղանկութիւնները Ռուս-թուրք պատերազմը առաջ բերին: Հին Սերպիոյ մէջ ռուսական հիւպատոսք կը պահանջէ որ սերպերը զինուորին: Վերջապէս Մակեդոնական կոմիտէները խաղաղութեան տրամադիր չեն երեւար, և Ռուսիոյ համաձայնութեամբ կամ անոր հակառակ, քիչ ատենէն թերեւս ապստամբութիւն մը պիտի հանեն ապագայ ընդհանուր շարժմը խուսափելու համար:

Այն ատեն զիւնանգէտները պիտի ուզեն Պերլինի 23րդ յօդուածին գործադրութիւնը: Բայց ահա ուրիշ յօդուած մըն ալ պէտք պիտի ըլլայ գործադրել. այն է Պերլինի 61րդ յօդուածը Հայերու նկատմամբ: Որովհետեւ կացութիւնը փոխուած չէ, գոյց աւելի վատթարացած:

Ապահովար վաղը Բարափներու խնդիրն ալ պիտի հարթուի խաղաղօրէն, ինչպէս հարթուած են նոյնօրինակ ուրիշ շատ խնդիրներ, որոնք ձգաւ են թուրքիոյ և եւրոպական տէրութեան մը միջև: Որովհետեւ, եւրոպական տէրութիւնները, որոնք այնքան անվոյթ և նոյնիսկ անգութ են ընկճուած ազգութիւններու ենթարկուած զարհուրելի տառապանքներուն հանդէպ, անհատապէս եռանդ մը կը ստանան, երբ խնդիր իրենց մէկ քանի գրամատներէն շահերը պաշտպանելու մասին ըլլայ, սպառնալիք. զրահուորներու

առաքում, խիստ խօսքեր իրարու  
եռեկ կը թափեն, կը մոռնան  
կարծես իրենց օր մը առաջուան  
գործարանքը զազիր Մարգաս-  
պանին համար, այնպիսի ըն-  
թացք մը բռնելով, որ իր առե-  
րեւոյթ խտուրթեամբը ծիծաղե-  
լի կը դառնայ և իր դատարկու-  
թեամբը զուտանք կը պատճառէ  
ամենուն:

Բայց փոքրիկ ազգութիւնները  
երբէք չեն յուսահատիր, տէրու-  
թեանց լքումը և միահամուռ դա-  
ւադրութիւնը անհանգուրժելի  
կացութիւն մը մշտնջենաւորելու  
համար, պատճառ կըլլայ որ նոյն  
բռնակալ գաւազանին տակ հեծող  
բոլոր ազգութիւնները իրարու  
ձեռք տան և միասին օր մը պայ-  
թեցնեն վճռական կռիւր որ ի-  
րենց բազմը պիտի որոչէ:

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՒՇ, 10 Յուլիս

Սիրելի ընկեր,

Անցեալ նամակովս պարզեցի մեր  
անտանելի կացութիւնը: Եթէ միտ-  
թարական երեւոյթ մը կայ, սա-  
կայն, որ մեզի սիրտ կուտայ ու կը  
պահպանէ հանգիստ սոյն քստմեղի  
զազանութեանց, ան կէտն է որ  
ճնշուի երն ու հարստահարութիւննե-  
րը որքան կաճին, այնքան ալ մենք,  
իրարու կը մօտենանք, ու ընկերու-  
թեան, փոխադարձ օգնութեան կա-  
պը կամրանայ մեր մէջ: Երբեմն  
այնպէս էր որ, դարեւոր ստրկու-  
թեան ողին մեզի բոլորովին մեղկա-  
ցուցած էր, և լոկ բանտի անունը  
լսելով սոսկում կը զգայինք. իսկ  
աժմ, բանտը, կախաղանը սովորա-  
կան երեւոյթներ դարձած են մեր  
աւօրեայ կեանքին մէջ: Այս պատ-  
ճառաւ, բոլոր Մուշը իր գաւառնե-  
րով յեղափոխութեան գիրկը նետուած

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### Ի. ՎԱԶՈՎ

ՈՉ ԿՐԹՂՃԱՆ ՈՉ ԿՐ ՍՈՒՆ

XIII

(Շար. նախորդ քիւնն)

Քօմիտէրը քաղաքավարութեամբ  
աւելցուց:

— Իմ պարտքս է զայն պէտք ե-  
ղած տեղը յանձնելու: Այնտեղ վե-  
րին իշխանութիւնը թող իր ընե-  
լիքը լաւ մտածէ:

— Բայց ես թող չեմ տար, որ հիւրս  
այս գիշեր բանտը պատկի:

Մաքէտոնսքին ոտքի ցատկեց, ու  
քօմիտէրին դէմ առ դէմ կենսալով գո-  
չեց:

— Այ՛ն, ես ալ թող չեմ տար աս  
խայտառակութիւնն է:

Մաքէտոնսքի օրինակը միւսներն  
ալ վարակեց, խլրտուած ու չնկոյց մը  
փրթաւ, որ զփոփոխութեան նշան էր:  
Քանի մը հոգիներ ոտքի ելան դի-

իրարու կապուած է եւ ամենպարզ  
գիւղացիէն սրտէն իսկ չեն կրնար  
խլել ազատութեան ոգին, որ ամուր  
թափանցած է հոն, ոչ միայն Հա-  
միաները, այլ նոյն իսկ իրենց Մու-  
ճահճեաները:

Սերոբի սպաննուելով՝ պահ մը  
թրքաց ու քրդերու մէջ ոգեւորու-  
թիւն տիրեց, որոնք կը հաւատային  
թէ՛ Սերոբը սպաննուելով յեղափո-  
խութիւնը ջնջած են, Բայց այդ քա-  
ջին մահը ճնշուող պիտի տարչատ մը  
Սերոբներու, որուն ապացոյցը ուշ  
չի մնաց յայտնուելու:

Պալըզցի Պրշարի Սալիլ և Գոյ-  
թանլը Եւրիֆի սպաննուելէն ետքը  
կառավարութիւնը համոզուեցաւ թէ  
խնդիրը սուր կերպարանք պիտի  
առնէ հետզհետէ, հալածումը հակա-  
ռակ արդիւնք պիտի տայ: Ուստի  
միւթէսարքը իր «Իտարէ մէջլիս»ով  
արտակարգ ժողով մը գումարեց, ու  
բուն հրաժարուեցան նաեւ թուրք եւ  
բուրսաղանները, այդ հրաժարուե-  
լէ մէկն ալ Քօյսիկի գիւղացի Պա-  
լըզցի Հաճի Ֆարհօն էր:

Այդ արտակարգ ժողովին նպատակն  
էր ամէն միջոց ձեռք առնուլ յեղա-  
փոխականներուն մուտքը արգիլելու  
համար, եւ յետոյ ամէն միջոցով  
երկրին մէջ գտնուած յեղափոխական-  
ները ձեռք անցնելու աշխատիլ, որ-  
պէս զի անգամ մըն ալ ատանկ ազ-  
դեցիկ ցեղապետներն ու իրենց գա-  
զանութեամբը նշանաւոր դարձած  
թիւրք ազանները չըսպաննուին յե-  
ղափոխական ըսուած մարդոց կողմէ:  
Հաճի Ֆարհօն ժողովին նպատակը  
հասկնալէ ետքը իր մտադրութեանը  
սապէս պատգար է. «Որպէս զի մեզի  
համար աղետալի եղող այդ գէպքերը  
անգամ մըն ալ տեղի չունենան,  
տուէք ինձի գրաւոր հրաման մը, եւ  
պիտի տեսնէք թէ կարճ կիջոցի մէջ  
դանակ մը իսկ չի պիտի ձգեմ հայե-  
րուն ձեռքը, եւ ֆէտայի մը չի պի-  
տի համարձակի այս կողմերը անց-  
նիլ: Այդ մարդիկը մեր ցեղապետ-  
ները կապաններն ու անպատիժ կը  
մնան, յանցանքը մերն է որ խիստ  
միջոցներու չենք դիմեր և լաւ դաս  
մը չենք տար: Եթէ առաջարկս կըն-

գունիք, լաւ, եթէ ոչ ես այս ժո-  
ղովին մէջ գործ չունիմ: Միւթէ-  
սարքիքը քիւրս պետին այս կարուկ  
առաջարկին վրայ, որ ծանր պատաս-  
խանատուութիւն յառաջ կը բերէր,  
չուարած աղուէսային խորամանկու-  
թեամբ կըսէ թէ՛ այդ պահանջի մա-  
սին որոշում մը տալը իր իրաւասու-  
թեանն է, եւ պէտք է Պիթլիսի  
կուսակալին դիմել: Ապահովութեան  
համար պէտք եղած գործն ու ստի-  
կանը Միւթէսարքը խոստացաւ տալ  
Պիթլիս գաղտնիքուն: Միւթէսարքի-  
ֆին այս խօսքին վրայ Հաճի Ֆարհօն  
8 ոտտիկանով և 9 զինուորով ճամ-  
բայ կիւնայ գէպի Պիթլիս:

Յեղ. կօմիտէն, որ իրեն արգելք  
եղող այդ տարրին վրայ լաւ կը հըս-  
կէր, երբ իմացաւ այդ ժողովին ու-  
րոշումը եւ հաճի Ֆարհօնի Պիթլիս  
ուղեւորութիւնը, որով յեղափոխութեան  
գլխուն նոր փորձանք մը պիտի պատ-  
րաստուէր, ատոր առաջին անգամ  
համար, անմիջապէս խուճար մը ճա-  
նապարհ կը հանէ: Մուշէն 7-8 ժամ  
հեռաւորութեամբ Ընալա ըսուած  
տեղը կերթայ սպասելու, մինչև որ  
հաճի Ֆարհօն իր հետեւորդներով հոն  
կը հասնի:

Երբ հաճի Ֆարհօն կուգայ, մէկէն  
կը պաշարուի, առանց ընդդիմադ-  
րութեան անձնատուր կըլլայ: Յեղա-  
փոխականները անոր զէնքերը կառ-  
նեն, զիրենք կը սպաննեն և իրենք  
ետ կը դառնան:

Այդ գէպքը կառավարութիւնը բո-  
լորովին կը շուարեցնէ: Թուրքերը  
չեն կրնար հասկնալ թէ, ո՛ւրիկէ եւ  
ի՞նչպէս ֆէտայիները կրցեր են ի-  
րենց ժողովին գաղտնիքը իմանալ  
և Հաճի Ֆարհօնի ձեռնարկութեան  
ստաջքն առնել:

\*\*\*



Ժամ մը յետոյ Պրշարովին հետ ետ  
դարձաւ:

— Խնդիրը պարզուեցաւ, ըսաւ նա,  
լաւ եղաւ որ գացի, Թուրքը ինքը  
խոստովանեցաւ որ Պրշարովը չարա-  
գործներու մէջ չէ տեսիլ:

Աս ան Մաչիցիին է, լրտեսը, Քօ-  
միտէրը Պրշարովէն ներդրութիւն  
խնդրեց:

Վլատիքով աթուռի մը վտայ նստե-  
լով, նամակի մնացած մասն ալ կար-  
գաց և ըսաւ:

— Քաջեր, մարտ 15ին գէպի Պուք-  
րէ: ճամբայ պիտի ելլանք: Մինչև  
ատ ատենը պէտք է հոս մնանք, եւ  
կրցածնուս չափ պատրաստուինք:

— Հաճին նամակը բարձրաձայն  
կարդաց:

— Հապա Բօրչէթօն ո՛ւր է:

— Վլատիքով ելաւ:

— Դիմա արձակուրդ է: Տղաքներ  
չորեքշաբթի օրը դարձեալ իմ մօտս  
պիտի ժողովուրդ:

— Կըլլայ:

Եթէ նորէն ոտտիկան մը գայ գը-  
լուի ցաւցնելու, լաւ մը պիտի տը-  
փենք... վկայ ըլլան Միթհատ փա-  
շայի կախաղանները:

### ՅՈՅԱԸ

(ԲԱՐԻ ՈՂԻ ՄԸ)

Նախնի Յունաց կրօնքը կուսու-  
ցանէր թէ վերին աստուածութիւնը  
իւրաքանչիւր մարդու ճնշուած ժա-  
մանակ անոր ոգի մը, պահպան հո-  
գի մը իր բնկեր կը պարգեւէր, որ  
զայն կառաջնորդէր բոլոր կեանքին  
մէջ, ամէն քայլին կընկերակցէր ու-  
նոր ու լոկ մահուան ժամանակ կը  
լքանէր զայն:

Այս վարդապետութիւնը սնտոի  
պատրանք մը չէ, որ սխալ հաստ-  
քով մը մոլորեցնէ մարդը. թող այ-  
սօր ալ մեր սրտերը նոյն հաստքը  
տածեն մեր մէջ բնակող զկալի այդ  
բարի ոգիին համար-խօսքս յոյսի մա-  
սին է: Մարդկային բնութիւնը մօ-  
տէն ուսումնասիրող, ամէն ժամա,  
նակներու եւ ամէն դասակարգերու  
բարոյական կեանքը խորապէս գննող  
գիտունները այն եզրակացոյթի կեան ե-  
կած են թէ մարդիկը յատու մղողը, ա-  
նոնց ուժ ու եռանդ պարզեցողը,  
զանոնք քաջալերողը Յոյսն է:

Մանուկը, որ դեռ նոր շարժիլ  
սորվելու վրայ է, իր խաւարատէ  
տունը կտոտեցանելու կաշխատի-  
չէնքը աւարտելէ առաջ յաճախ կը  
փլչի և ամբողջ աշխատութիւնը կը  
փճանայ: Սակայն մանուկը վերասին  
կսկսի շինել ու շինել: Ու ի՞նչ բան  
է որ յարատեւելու համարութիւնը  
կուտայ անոր: — Այն յոյսը թէ՛ ան  
իր չէնքը վերջապէս պիտի յաջողի  
կառուցանել: Զուարթ շրջանակի մը  
մէջ գտնուող երիտասարդին կամ  
օրիորդին սիրտը կը պարուրուի ուրի:  
անգամ աւելի բարձր բերկ-  
րութիւններ վայելելու մտք  
տենչով: Հասուն մարդը իր ակնար-  
կը ձեռութեան բարձր յարգին ու  
արժանիքին վրայ կուղղէ, եւ ձե-  
րունի քայլին կը հետեւի դեռ այն  
միտքարական յոյսը թէ՛ այս անուշ  
կեանքին, այս գեղեցիկ երկրէն դեռ  
չի պիտի բաժնուի ան ընդերկար:

Յուսոյ մղումն է որ, մենք իս-  
կոյն կը փարինք մեզի ներկայացած  
նորութեան մը, զայն վարդապետ:

— Ինչպէ՞ս, մէկն ալ չի կրնար  
գալ:

— Թող միայն յանդգնին:

— Յոսուութիւնն:

— Բարի գիշեր:

Ամէնքն ալ գուրս ելան:

Մաքէտոնսքին դպրոցի բակէն  
գուրս չեկած, անկիւն մը սպրդեցաւ  
ուր կտրուած փայտեղ շարուած էին  
և իր արմուկի տակը տասը կտոր  
վերցնելով Հաճիին հետ ուղիղ իրենց  
խրճիթը սկսան երթալ: Մաքէտոնս-  
քին կամացուկ մը ըսաւ:

— Անոնք ազգային փայտեր են,  
մենք ալ ազգային մարդ ենք:

Մոայլ խաւար մը կտրած էր, փո-  
ղոցները գրեթէ ամայացած էին և  
քամին ուժով կը փչէր: Երկու հայ-  
գուկները խրճիթին հասնելու կշտա-  
պէին և խօսք մըն ալ չէին չնչնար:  
Տեղ մը պահակ ոտտիկանը Մաքէ-  
տոնսքին կեցուց և արմուկի տակը  
ինչ կրելը հարցուց:

— Աս գիշերուան էն պէտքի բանը,  
եղբայրիկս, բոմաներէն պատասխա-  
նեց անոր, իսկ պուլկարեքէն հայն-  
յանքներ տեղացուց:

Երբոր խրճիթէն ներս մտան, Հա-  
ճին լուցկին վառելով ճրագը կը  
փնտէր: Յուրաքանչեւ անկիւն մէջ ալ

գաւարթ լոյսի մը մէջ կը տեսնենք, Երեւակայութիւն է որ գեղեցիկ հնարաւորութեանց ամբողջ աշխարհը մեր աչքին առջեւ կը պատկերացնէ:

Յուսոյ մղումն է որ երկտասարդական տարիներու մէջ աշխարհը այնչափ ուրախ ու հաճելի կերպարանքով մեր առջեւ կը տարածուի եւ մարդիկ հրեշտակի նման մեր առջեւ կերթնեն: Միտք, դեռ յուսահատութեան անձանթով, իւրաքանչիւր անհատի մէջ ստեղծեց հանդերձալ գեղեցիկ ապագային իտէալը: Երբ ներկան իր երկարութեան հրեշտակութեամբ խտրու ու կարծօրէն կը ճնշէ մարդուն վրայ այդ գառն այժմէութեան մէջ, մեր գէժ կը շողջողայ ապագան, բնկերական միութեան ապագայ գեղեցիկ իտէալը, ուր ամէն մարդ պիտի ստանայ ինչ որ իրեն վայել ու պատշաճ է: Այսօր ամէն մարդ կը գեղեցորուի այն յոյսով թէ՛ պիտի գայ ժամանակ մը, երբ ամբողջ մարդկութիւնը մէկ սիրտ մէկ հոգի պիտի ըլլայ, երբ արգարութիւնն ու խաղաղութիւնը զիրար պիտի ողջագործեն, ուր գայիբը գառնուկներու հետ պիտի արածուին...

Ամէն տեղ իրեւանութիւնը այն աստիճան աղքատ է որ, անիկայ չի կրնար մարդը գոհացնել: Մարդը իր հանգիստ խաղաղ ժամերուն մէջ, յաճախ երեւակայութեան օգտաւէր թեւ երուն վրայ հեծած՝ ներկային սահմաններէն ու արգելքներէն անդին, զկտի վեր կը սլանայ, ու հեռաւոր միջոցին անշրպեալէն եղեմը կերպով:

Ասիկայ փրկաւէտ միջոցարանք մըն է մարդուն համար, որ միշտ չարին դէմ լուր, լուսադոյր, ամենալուր մը խորհի: Իր այս ընդունակութեամբ անիկայ երկինքը երկրի վրայ կը հրաւիրէ, եւ տխուր ժամերուն մէջ իմկ գոհ ու երջանիկ կը մնայ:

ԲԱԶՈՒԿ

(Շարունակելի)

կը տիրէր: Վառարանը անխօս ու ստոծ անոնց կապաւէր: Մաքէտոնսքին փայտերը սախտակամածին վրայ թափեց:

— Սպասէ, լեցնեմ վիշապին ընդունը լեցնեմ որ սատանայի պէս կը նայի, եւ տեսնես հիմա ինչպէս պիտի գոռոյ ըսաւ Մաքէտոնսքին եւ ճրագով մէջը նայեցաւ ու մտխոր խտունեց, բայց յանկարծ շուարած ու պոյնը նետած ետ քայտեցաւ...

— Հաճի, վիշապը բերանը օձ մը կը բռնէ, ասանկ բան անսած ունիս:

— Ինչպէս:

— Վառարանին մէջ օձ մը կայ մտխորին մէջ կը լըր մը կծկուեր է:

— Դժոխք, ստոտանայ, բացագանչեց հաճին, աս ցուրտին օձ: Մեծած ըլլալու է:

— Իրաւ, բնաւ չի շարժիր, քարացեր է, Դաւաւրի իմ ուրբերուս պէս... Սպասէ, դուրս քայտեմ, եւ ուժով մը երկար ունելով ծայրէն բռնեց:

— Վա՛յ, ծանր է, կարծես արծիճով լեցուած է... Ա՛հ, աս օձ չի պիտի ըլլայ... Աս կանանչ կաշի կը նմանի: Սպասէ:

ՆԱՄԱԿ ԽՄԱԿՐՈՒԹԵԱՆ

Ազնիւ հայրենակիցներ,

Խումբ մը պատուարժան ազգայիններու կողմէ եւ նախաձեռնութեամբ Պ. Պ. Մ. Գալփաքճեանի եւ Յ. Կայանանի Փարիզի ընդհանուր Հայութեան հրաւեր ուղղուած էր գաղթականային ժողով մը գումարելու համար, որ տեղի ունեցաւ՝ 31 յուլիս 20րեքշաբթի գիշեր, «Իրանտ Տ'Օրիսնտի» մէջ սրահին մէջ:

Հրաւերին անձամբ պատասխանած էին հարիւրէ աւելի ազգայինք:

Ժողովը քուէից բացարձակ առաւելութեամբ Պ. Պ. Մինաս Զեւարազը Ատենայեան եւ Հ. Օտեանը Ատենադպիր ընտրելէ ետքը՝ լըսեց վերջերս, քաղաքիս մէջ, քանի մը անձերու կողմէ կազմուած Հայկական Միութեան և յարակից խնդիրներու մասին Պ. Պ. Յ. Գայանանի եւ Մ. Գալփաքճեանի մանրամասն բացատրութիւնները, որոնք ցոյց տուին Միութեան ափ յափոյ և ապօրինի կազմութիւնը, որ առաջին օրէն իսկ բողոքներու տեղի տուած էր Բարիզի հայ գաղթականութեան մէջ:

Ժողովը լսեց նաեւ վերոյիշեալ Միութեան Տնօրէն-Ժողովոյ Ատենայեան Պ. Յ. Իսկէնտէրի և ատենադպիր Պ. Ա. Զօպանեանի մասին եղած ամբաստանութեանց սուլիւ կազմուած Պատուոյ Ատենի պարագաները, տրուած վճռագիրը, և վճռէն յետոյ երեւան եկած լուրջ յայտնութիւններն ու զանազան մանրամասնութիւնները:

Այս խնդիրներու մասին թեր ու գէժ կարծիքներ լսելէ ետքը՝

- Զգուշացիր, նկատեց Հաճին բանի մը անտեղեակ, ինք այժմ ծնելով վառարանին մէջ կը նայէր:
- Մաքէտոնսքին ունելով չէր բռնած այլ կը քայտէր: Վերջապէս օձանման իրր դուրս հանուեցաւ եւ գետինը ինկաւ, մետաղի հնչելն մը հանելով:
- Ա՛հ, կամար է, ճչաց Մաքէտոնսքին:
- Լեցուն է, ոտնաց Հաճին:
- Աս խօսքերուն վրայ երկուքն ալ ձեռքերով ամուր բռնեցին կամարը, բայց Մաքէտոնսքին յաղթեց եւ կամարը անոր ձեռքը մնաց: Հաճին կը զողար, իսկ Մաքէտոնսքին կը հեւար եւ բնազդմամբ, կամարը իր ընկերով ընչաքաղց ակնարկներէն կը հեռացնէր: Իւրոյն կամարը քակուած ծայրէն փայլուն ոսկի նարոյններ գետինը թափուեցան: Հաճին խիստ գարի պէս անոնց վրայ ցատկեց:
- Սպասէ, ըսաւ Մաքէտոնսքին, եւ իր երկարութեամբ անոր վզին կոխելով, ինչ որ ելլայ երկուքիս է, պիտի կրեսնէր:
- Կրեսնէր, կրեսնէր, ըսաւ Հաճին շուշը կտրուած:
- Կամարը ամբողջովին պարպուեցաւ:

ժողովս վեցի գէժ միաձայն հաւանութեամբ քուէարկեց Պ. Մ. Միհրդատեանցի առաջարկած հետեւալ բանաձեւը:

«Բարիզի մէջ վերջերս հիմնուած Հայկական Միութեան Տնօրէն-Ժողովը առժամայն հանգամանք մը ունենալով, և այս ընտրութեան առթիւ ծագաց ըլլալով շատ մը խնդիրներ, որոնք կրնան արգելք ըլլալ Միութեան նպատակին իրագործումին, Բարիզի Հայ Գաղթականային Ժողովոյ իղձ կը յայտնէ ընդհանուր ժողով գումարել՝ առժամայն Տնօրէն-Ժողովին հրաժարականը ընդունելու և վերջնական Տնօրէն-Ժողով մը կազմելու համար, առանց Միութեան կանոնագրին ֆրանսական կառավարութեան կողմէ վաւերացումին սպասելու»:

Մնանք, ազնիւ հայրենակից խորին յարգանք  
Ատենադպիր Ատենայեան  
Հ. Օտեան Մինաս Զեւար  
Բարիզ 2 օգոստոս 1901

ԺԱՆՏԱԻՏԸ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

«Կալէթ տը Լօզան»ի մէջ Պօլսէն թղթակցութիւն մը երեւցած էր ուր կամբաստանուէր Տօքթ Նիկօլ, Պօլսոյ Միքրօպազնական հաստատութեան տեսուչը: Ասիկա իր թէ գիտմամբ հիւանդները ժանտախտէ վարակուած կը ցուցնէ եղեր, որպէս զի դրամ ստանայ, որովհետեւ կառավարութիւնը խոստացեր է դրամական հատուցում ընել, ամէն անգամ որ Նիկօլ ժանտախտի նոր գէպը մը գտնայ:

Արդ, Տօքթ. Ռու, Բարիզի

նարոյններու կոյտ մը գեանին վրայ կը լողար: Երկու հայրուկները ապշած իրարու երես նայեցան:

— Ո՞վ է մեզի աս արիւնալի խաղը ընողը, գոչեց Մաքէտոնսքին:

— Ո՞վ գիտէ-բաղդը ըլլալու է-պատասխանեց Հաճին:

— Այդպէս է նէ, ինչու ժամանակին աս կամարը չը նուիրեց, հիմակ ձեռքուն վերջը, բայց ամէնը մէկ է, ասոր ալ շնորհակալ ենք, ըսաւ Մաքէտոնսքին եւ կտաւ ոսկիները համբոյ:

— Ու՛, ու՛, ու՛, գոչեց Հաճին, ճակարկ զարնելով, որչափ ազուշ եմ, Բօքչէթօն զայն թագուցած է, գարշելին: Մեզնէ կը պահէ, Այսօր թուրքը ճանկած էր, կըմբռնէ՞ս: Ահա իր գրած հեղանակն ոտանաւորն ալ հոս ինկած է...

— Ինչ, ադ բողոքականին ձեռքէն կուգա՞յ այդ տեսակ գործեր ըսաւ նախանձով Մաքէտոնսքին: Ընչդ հարիւր եւ քառասուն ոսկի, աս կոյտը դուն առ ես ալ սա կըրիկները ծոցս զետեղեմ մուկերը չուտեն:

Երկուքն ալ ծոցերնին ոսկիով կոխեցին, սր զուարթօրէն կը հնչէր:

— Է՛յ, ես քրտնեցայ, տաքցայ:

Բասթօրեան հիմնադրութեան տեսուչը, յիշեալ թերթին ուղղուած նամակով մը կը հերքէ այն լուրը թէ Տօքթ. Նիկօլ մասնաւոր հատուցում մը կստանայ գտած ժանտախտի գէպերուն համար:

«Ճշմարտութիւնը այն է որ, կը գրէ Տօքթ. Ռու, Ներկայ տարւոյ սկիզբէն ի վեր, Տօքթ. Նիկօլ իմացուցած էր թուրք իշխանութեանց Պօլսոյ մէջ ժանտախտի գէպեր տեղի կունենան:

Այս ազգարարութիւնը անհաճոյ եղաւ թուրք կառավարութեան, որ շատ չախորժիր ժանտախտի մասին խօսելէ. անհաճոյ եկաւ նաեւ անոնց՝ որոնք կը կարծէին թէ ձեռք առնուելիք առողջապահական միջոցներու պատճառաւ պիտի վտանգուին իրենց շահերը: Այսօր գէպերը ստուգեցին Տօքթ. Նիկօլի տեղեկութեանց ճշգրտութիւնը, եւ եթէ ժամանակին զինքը մտիկ ըրած ըլլային, Պօլսոյ առողջապահական վիճակը այսօր Եւրոպայի համար վտանգ մը պիտի չըլլար»:

Ա. Զ. Դ.

Տեղւոյս Ա. Լուսաւորչեան երկսեռ վարժարանին համար վարժուհի մը պէտքը զգալի ըլլալով, որ կարող ըլլայ երկրորդական դասեր աւանդել և միանգամայն քաջ հմուտ ձեռագործի, այդ պաշտօնին փափագող անձերէն կը ինչպիսի ուղղակի հոգարարութեանս գիմել: Ամսականը գոհացուցիչ:

Ի գիմաց Իսլիմիաի հոգարան, Մ. Սուրիշ(եգեան)

Ճշմարտ է եղեր ոսկին կը տաքցնէ կըսեն, ըսաւ Մաքէտոնսքին, է՛ հիմակ հոս պիտի զիջերի՞ք անասուններու պէս:

— Բէթըրպուրկ հիւրանոցը, գոչեց Հաճին:

— Նո՞ր՞վք քու Բէթըրպուրկի շատ հեռու է:

— Է՛յ, թող Բէթըրպուրկը ըլլայ ֆայթօն մը գտնայինք լաւ պիտի ըլլար:

Երկու հայրուկները ոտքի ելլալով դառն մտեցան: Մաքէտոնսքին արահամարհական նայուածք մը նետելով աղքատիկ խրճիթին ըսաւ:

— Փայտերը թող Բօքչէթօնին միան երբ որ գայ պատրաստ գտնէ: Ժամ մը տեղէ ատենք բերած եմ, թող Մաքէտոնսքին բարեկամութիւնը դնահատէ:

Թարգմ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ

(Շարունակելի)

